

երուն « Որ վասն մեր խաչեցար¹⁸, » որ Աբրահամ կաթողիկոսին հրամանաւ 596 ին Դընայ ժողովոյն մէջ ընդունելի եղաւ¹⁹ :

Հայկական նուիրապետութիւնը կը կազմեն՝ Եպիսկոպոսութիւն, Քահանայութիւն եւ Սարկաւագութիւն :

Եպիսկոպոսութիւնն երեք աստիճան ունի : Արքեպիսկոպոս, Եպիսկոպոս եւ Վարդապետ²⁰ :

Վարդապետք Աստուածաբանութեան ուսուցչութեան աստիճան ունին, կրօնաւոր են, երբեմն թեմեր կը կառավարեն եւ եպիսկոպոսական պաշտամունք կը կատարեն :

Սարկաւագութիւնը երկու աստիճան ունի՝ Աւագ սարկաւագ, որ արտօնութիւն ունի Ս. Աւետարանը կարդալ²¹ եւ սկիհն նուիրատնէն ի խորան բերել, եւ Սարկաւագ : Վերջապէս կան նաեւ ուրիշ կղերական փոքր աստիճաններ, ինչպէս՝ ջահընկալ, երգմեցուցիչ եւ դռնապան²² :

Դարձեալ արեւելեան Հայք կը զանազանեն « սպիտակ » (աշխարհական) քահանայ, որպիսի են ամուսնացեալ քահանայք եւ սարկաւագունք, եւ « սեւ » արեղայ, որպիսիք են՝ եպիսկոպոսունք եւ վարդապետք²³ :

Հայ եպիսկոպոսունք 1181 էն ի վեր եկեղեցական պաշտամանց մէջ լատինական թագ կը գործածեն, որպէս զի զանազանին վարդապետներէն եւ քահանաներէն, որոնք եկեղեցական պաշտամանց ժամանակ որթողոքս եպիսկոպոսաց թագը (սաղաւարտ) կը կրեն :